ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 106
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-064-0003-0008 կադաստրային ծածկագրով 0.12487 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողեր (ըստ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծի, ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության խաղող հողեր)	07-064-0003-0008 կադաստրային ծածկագրով 0.12487 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:
2. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցված շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին:

3. Նոր Հաճըն համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Քանաքեռավան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «25» «ապրիլի» 2023 թ.